



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՈՐՈՇՈՒՄ**


15 ապրիլ 2011 թ.

թիվ 18-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ
ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏԵՂԱՄԱՍԻ ՎԱՐԻՉԻ ԵՎ ՆՐԱ ՕԳՆԱԿԱՆԻ
ՀՈՒՇԱՏԵՏՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

հաստատել «Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականին անցկացվելիք մարդահամարի ընթացքում մարդահամարի տեղամասի վարիչի և նրա օգնականի» հուշատետրը՝ համաձայն հավելվածի:



Հայաստանի Հանրապետության
2011 թվականի մարդահամար

Ձև թիվ 13

Հ Ո Ւ Շ Ա Տ Ե Տ Ր
ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏԵՂԱՄԱՍԻ ՎԱՐԻՉԻ
ԵՎ ՆՐԱ ՕԳՆԱԿԱՆԻ

Մարզ-----Տարածաշրջան-----
ք. Երևան Վարչական շրջան

Քաղաք-----Համայնք-----

ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏԵՂԱՄԱՍ N-----

Մարդահամարի տեղամասի վարիչ-----

(Ազգանուն, անուն, հայրանուն)

Մարդահամարի տեղամասի վարիչի օգնական-----

(Ազգանուն, անուն, հայրանուն)

Մարդահամարի տեղամասի հասցեն-----

Հեռախոսի համարը-----

ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային բաժնի հասցեն-----

Հեռախոսի համարներ-----

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 26-ի թիվ 301-Ն որոշման համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում հերթական մարդահամարն անցկացվելու է 2011 թվականի **հոկտեմբերի 12 - 21-ը ներառյալ**:

Մարդահամարի անցկացման աշխատանքները կազմակերպելու և իրականացնելու համար հանրապետության մարզերի համապատասխան տարածքներում՝ համաձայն տվյալ մարզի համար հաստատված ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման կազմակերպական պլանների, կազմավորվում են **մարդահամարի տեղամասեր**: Դրանցում աշխատանքները կազմակերպելու և վերահսկելու համար ներգրավվում և նշանակվում են **մարդահամարի տեղամասի վարիչներ և** նրանց օգնականներ:

Մարդահամարի տեղամասի վարիչը և նրա օգնականն իրենց աշխատանքի ընթացքում պետք է ղեկավարվեն «Պետական վիճակագրության մասին» և «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքներով, «Հայաստանի Հանրապետությունում 2011թվականի մարդահամարի կազմակերպչական և մեթոդաբանական հիմնական դրույթներով», «Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի մարդահամարն անցկացնելու և մարդահամարի հարցաթերթը լրացնելու կարգի հրահանգով» և կազմակերպական յուրաքանչյուր գործընթացը կանոնակարգող ցուցումներով և հրահանգներով:

«Մարդահամարի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված է.

«Հոդված 13. Պատասխանատվությունը մարդահամարի մասին օրենսդրությունը խախտելու դեպքում

Բնակչության վերաբերյալ անհատական տեղեկություններին տիրապետող աշխատակիցներին արգելվում է որևէ մեկին հաղորդել մարդահամարի լրացված փաստաթղթերի բովանդակությունը: Մարդահամարի սկզբնական (անհատական) տվյալների օգտագործման կարգի խախտման դեպքում մարդահամարի աշխատողները պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Մարդահամարի սկզբնական նյութերը դատական, դատաքննչական և այլ մարմինները որպես ապացույց չեն կարող օգտագործել:

Մարդահամարի հարցաթերթերի հարցերին պատասխանելուց հրաժարվելն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով»:

Այսինքն՝ «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների համաձայն՝ մարդահամարի տեղամասի վարիչը և նրա օգնականը պատասխանատվություն են կրում մարդահամարի ժամանակ իրենց ամրակցված տեղամասում հավաքագրված անհատական տեղեկատվության գաղտնիության պահպանման համար:

**ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏԵՂԱՄԱՍԻ ՎԱՐԻՉԻ ԵՎ ՆՐԱ ՕԳՆԱԿԱՆԻ
Պ Ա Ր Տ Ա Վ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ը**

Մարդահամարի տեղամասի վարիչը և նրա օգնականը պատասխանատվություն են կրում իրենց ամրակցված մարդահամարի տեղամասում.



- Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի նախապատրաստման, անցկացման, նյութերի մշակման և հրապարակման աշխատանքների ժամանակացույցով սահմանված նախապատրաստական աշխատանքների ժամանակին և որակով կազմակերպման ու իրականացման համար,

- բնակչության հաշվառման ճշգրտության և մարդահամարային բոլոր փաստաթղթերի ամբողջական և սահմանված կարգով լրացման համար,
- հրահանգիչ-հսկիչներից մարդահամարի ժամանակ հավաքագրված նյութերի ընդունման համար,
- մարդահամարի ժամանակ հավաքագրված նյութերը ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տարածքային բաժնի պատասխանատու անձին հանձնելու համար:

I. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

**ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏԵՂԱՄԱՍԻ ՎԱՐԻՉԸ ԵՎ ՆՐԱ ՕԳՆԱԿԱՆԸ
Պ Ա Ր Տ Ա Վ Ո Ր Ե Ն.**

1. 2011 թվականի սեպտեմբերի 24-ից մինչև սեպտեմբերի 26-ը մասնակցել ուսուցման (հրահանգավորման) դասընթացներին և անցնել պատրաստվածության ստուգում:

2. 2011 թվականի սեպտեմբերի 30-ից մինչև հոկտեմբերի 2-ը մասնակցել իրենց ամրակցված տեղամասի հրահանգիչ-հսկիչների ուսուցման դասընթացներին ու պատրաստվածության ստուգմանը:

3. 2011 թվականի հոկտեմբերի 4-ից մինչև հոկտեմբերի 7-ն ապահովել իրենց ամրակցված մարդահամարի տեղամասի հաշվարարների ուսուցման (հրահանգավորման) և պատրաստվածության ստուգման կազմակերպումն ու իրականացումը:

4. Մասնակցել բնակչության շրջանում մարդահամարի իրազեկման աշխատանքներին:

5. Լրացնել մարդահամարի տեղամասի վարիչի և նրա օգնականի հուշատետրի 1-ին աղյուսակը:

6. Տեղամաս դուրս գալու միջոցով ծանոթանալ իրենց ամրակցված մարդահամարի տեղամասի սահմաններին, այդ ընթացքում առաջացած հարցերը քննարկել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱՎԾ) մարզային և Երևան քաղաքի գործակալություններում տարածքային բաժնի պատասխանատու անձի կամ մարդահամարի աշխատանքները մարզերում համակարգողի հետ (հետայսու՝ **համակարգող**):

7. ՀՀ ԱՎԾ մարզային/ք.Երևանի գործակալության տարածքային բաժնի պատասխանատու անձի և համակարգողի հետ միասին, մարդահամարն անցկացնելու կազմակերպման պլանի համաձայն, հրահանգիչ-հսկիչներին տեղաբաշխել ըստ հրահանգչական տեղամասերի, ինչպես նաև տեղամասում հրահանգիչ-հսկիչների հետ համատեղ շրջագայելով՝ ծանոթացնել նրանց իրենց հրահանգչական տեղամասերի սահմաններին:

8. Հրահանգչական տեղամասի սահմանների ճշտման ժամանակ պետք է հատուկ ուշադրություն դարձնել թաղամասից (զանգվածից) դուրս գտնվող տներին (շինություններին), մեկուսացված շենքերին, ոչ բնակելի տներին (շինություններին), որոնցում կարող է ապրել բնակչություն: Դրանք պետք է գրանցել համապատասխան հրահանգչական տեղամասում: Անհրաժեշտ է հետևել, որպեսզի ոչ մի բնակավայր դուրս չմնա այս կամ այն հրահանգչական տեղամասից, չլինեն հիմնական թաղամասից (զանգվածից) ձորակներով, անտառակներով և այլնով անջատված տների (շինություններին) բացթողումներ: Որևէ բնակավայրում տների բացթողումներ հայտնաբերելու դեպքում, դրանք գրանցել համապատասխան հրահանգչական տեղամասում:

9. Կազմակերպական պլանի Ձև-1Կ, Ձև-2Կ և Ձև-4Կ ձևաթղթերում լրացնել հրահանգիչ-հսկիչների և հաշվարարների ազգանուն, անուն, հայրանունը:

10. Մարդահամարի տեղամասում շրջագայելով՝ քաղաքներում և խոշոր գյուղերում (5 հազար և ավելի բնակչությամբ) անցկացնել տների (շինությունների) և գյուղական վայրերում՝ գյուղական համայնքների ցուցակների ստուգումներ և ըստ անհրաժեշտության՝ ճշգրտումներ: ՀՀ ԱՎԾ մարզային/ք.Երևանի գործակալության տարածքային բաժնի պատասխանատու անձից ստանալ մարդահամարի տեղամասի բազմաբնակարան շենքերի համար լրացված Ձև թիվ 1-բնակբնութագիր («Բազմաբնակարան շենքի բնակարանների բնութագիրը») հարցաթերթերը և ստուգել դրանց ամբողջական առկայությունը: Որևէ բազմաբնակարան շենքի համար տվյալ ձևաթղթի բացակայության դեպքում անհրաժեշտ է դիմել ՀՀ ԱՎԾ մարզային/ք.Երևանի գործակալություն:

11. Տների (շինությունների), գյուղական համայնքների ցուցակների ստուգումից հետո ՀՀ ԱՎԾ մարզային/ք.Երևանի գործակալության և դրանց տարածքային բաժինների պատասխանատու անձի հետ միասին կազմպլանի ձևաթղթերում և քարտեզագրական նյութերում կատարել անհրաժեշտ փոփոխություններ և ճշգրտումներ:

12. Գյուղական համայնքների ցուցակների և կազմպլանի Ձև 4կ-ի հիման վրա լրացնել գյուղական բնակավայրերում հրահանգիչ-հսկիչի հուշատետրի 2-րդ աղյուսակը:

13. Վերահսկել հրահանգիչ-հսկիչների կողմից կազմպլանի հիման վրա քաղաքներում հաշվարարի հուշատետրի 1-ին աղյուսակի 1-6-րդ սյունակների և գյուղական վայրերում հաշվարարների հուշատետրերի 1-ին աղյուսակի 1-4-րդ սյունակների լրացման ճշգրտությունը:

Բնակչության թվաքանակի մասին տվյալները հաշվարարին չեն հաղորդվում:

14. ՀՀ ԱՎԾ մարզային/ք.Երևանի գործակալության տարածքային բաժնի պատասխանատու անձից ստանալ անհրաժեշտ քանակությամբ հարցաթերթեր, հուշատետրեր, հրահանգներ, Ձև թիվ 1-բնակբնութագիր հաշվետվական ձևեր, անհրաժեշտ այլ փաստաթղթեր և պիտույքներ, և ապահովել դրանց բաշխումն ըստ հրահանգչական տեղամասերի:

15. Լրացնել մարդահամարի տեղամասի վարիչի և նրա օգնականի հուշատետրի 2-րդ աղյուսակի 2-10-րդ սյունակները:

16. Ճշտել մարդահամարի տեղամասի տարածքում գտնվող հիվանդանոցների, ծննդատների, առողջարանների, հանգստյան տների, ծերերի և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպությունների, մանկատների, գիշերօթիկ դպրոցների, դպրոցներին կից գիշերօթիկների, հյուրանոցների, կայարանների, օդանավակայանների և նման այլ կազմակերպությունների ցանկը և ստուգել, թե արդյոք դրանք ներառված են կազմվանի համապատասխան ձևաթղթերում:

17. Եթե մասնագիտացված տներում (տարեցների և հաշմանդամների սոցիալական սպասարկման կազմակերպություններ, մանկատներ, դպրոցներին կից գիշերօթիկներ և գիշերօթիկ դպրոցներ) և մշտական բնակչությամբ նման այլ կազմակերպություններում ստեղծված են ինքնուրույն հաշվային տեղամասեր, մարդահամարի տեղամասի վարիչը նախօրոք տեղյակ է պահում այդ կազմակերպությունների ղեկավարությանը՝ դրանցում մարդահամարի անցկացման կարգի և անհրաժեշտ թվով աշխատողների ուսուցման (հրահանգավորման) ժամկետների մասին:

Եթե նշված կազմակերպություններում ինքնուրույն հրահանգչական տեղամաս չի ստեղծվում, և դրանք մտցված են հիմնական հրահանգչական տեղամասի կազմի մեջ, ապա մարդահամարի տեղամասի վարիչն այդ մասին տեղյակ է պահում համապատասխան տեղամասային հրահանգիչ-հսկիչին, իսկ այդ կազմակերպության ղեկավարին հայտնում, թե ով է պատասխանատու իր կազմակերպությունում մարդահամարի անցկացման համար, և հայտնում այն հաշվարարի անուն, ազգանուն, հայրանունը, ով տվյալ կազմակերպությունում անցկացնելու է մարդահամարի հաշվառումը:

ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ

18. **Հոկտեմբերի 11-ի լույս 12-ի գիշերը** պետք է կազմակերպել մարդահամարի անցկացումը մարդահամարի տեղամասի տարածքում գտնվող օդանավակայանում (դրանց առկայության դեպքում), իսկ **հոկտեմբերի 12-ին**՝ ժամանակավոր կացատեղ հանդիսացող կազմակերպություններում:

19. Մարդահամարի առաջին օրն անհրաժեշտ է պարզել, թե արդյոք մարդահամարի տեղամասի բոլոր հաշվարարներն ու հրահանգիչ-հսկիչներն են դուրս եկել աշխատանքի: Որևէ հաշվարարի կամ հրահանգիչ-հսկիչի աշխատանքի դուրս չգալու դեպքում պարզել պատճառը և անհրաժեշտության դեպքում փոխարինել նրան մարդահամարի տեղամասի ռեզերվային (պահեստային) հաշվարարով կամ հրահանգիչ-հսկիչով:

20. Քաղաքներում մարդահամարի առաջին օրվա վերջում կազմակերպել հրահանգիչ-հսկիչների ու հաշվարարների հավաք և վերլուծել մարդահամարի հարցաթերթի և մարդահամարային մյուս փաստաթղթերի լրացման ժամանակ առաջացած դժվարություններն ու ստուգման ժամանակ հայտնաբերված բոլոր անճշտությունները:

21. Գյուղական վայրերում մարդահամարի առաջին օրվա վերջում անցկացնել մոտակա տեղամասի հրահանգիչ-հսկիչների ու հաշվարարների հետ նմանօրինակ հավաք, իսկ մարդահամարի երկրորդ օրը՝ մնացած հրահանգիչ-հսկիչների ու հաշվարարների հետ:

22. Սահմանել հրահանգիչ-հսկիչների և հաշվարարների աշխատանքների ամենօրյա հսկողություն, ձեռնարկել միջոցներ յուրաքանչյուր հրահանգիչ-հսկիչի և հաշվարարի կողմից մարդահամարի հաշվառման գործընթացն ապահովելու, մարդահամարի ձևաթղթերի լրացման կարգի մասին ցուցումները, հուշատետրում նշված պարտականությունները կատարելու համար:

23. Մարդահամարի ընթացքում ծանոթանալ յուրաքանչյուր հաշվարարի կատարած աշխատանքին և ընտրովի ստուգել նրանց կողմից լրացված մարդահամարի հարցաթերթերը և համապատասխան փաստաթղթերը:

ՎԵՐԱՀՄԿԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

24. Մարդահամարի ավարտից հետո՝ **հոկտեմբերի 22-ին**, հաշվարարների կողմից բնակչության հաշվառման ամբողջականությունն ու ճշգրտությունը ստուգելու համար հրահանգիչ-հսկիչների հետ միասին ընտրել յուրաքանչյուր հաշվային տեղամասի բնակելի շինությունների 10%-ը՝ դրանցում վերահսկիչ շրջագայություն (շրջայց) անցկացնելու համար, և վերահսկել դրա անցկացման ընթացքը:

25. Յուրաքանչյուր հրահանգիչ-հսկիչ իրեն ամրակցված տեղամասի հաշվարարների հուշատետրերի 2-րդ աղյուսակում «-»(մինուս) նշանով նշում է ժամանակավոր կացատեղ հանդիսացող կազմակերպությունները (հիվանդանոցներ, հյուրանոցներ և նմանատիպ այլ կազմակերպություններ) և այն բնակելի շինությունները, որոնցում նախնական շրջագայության ժամանակ ոչ ոք չի բնակվել: Հրահանգիչ-հսկիչները հաշվարարների հուշատետրերը ներկայացնում են մարդահամարի տեղամասի վարիչին (օգնականին) վերահսկիչ շրջագայության ընտրանքը կատարելու համար, ըստ հետևյալ կարգի՝

- «-» (մինուս) նշանով չնշվածների թվից, գունավոր մատիտով, պետք է ընդգծել առանձին տողով գրված յուրաքանչյուր 10-րդ բնակելի միավորը: Օրինակ` եթե հաշվային տեղամասում ընդգծված է 50 բնակելի միավոր, ապա ընտրանքը կատարվում է 50 բնակելի միավորի 10%-ի չափով, այսինքն` ընտրանքի ենթակա են 5 բնակելի միավոր: Եթե ընտրանքը սկսել են N 1 բնակելի միավորից, ապա մյուսները կլինեն N 11, 21 և այլն, իսկ եթե N 2 բնակելի միավորից` մյուսները կլինեն N 12, 22 և այսպես շարունակ:

26. Ընտրանքի սկիզբը պետք է հաջորդեցնել` 1-ին հրահանգչական տեղամասում ընտրանքը սկսել առաջին շինությունից, 2-րդ հրահանգչական տեղամասում` երկրորդ շինությունից և այսպես շարունակ: Հրահանգչական տեղամասի սահմաններում ընտրանքը կատարելիս, հաշվային տեղամասերի համարների հաջորդականության պահպանումը պարտադիր չէ:

Մեկ հաշվային տեղամասում ընտրանք կատարելուց հետո, այդ հաշվային տեղամասի բնակելի շինությունների մնացորդը պետք է գրել և այն հաշվի առնել հաջորդ հաշվային տեղամասում ընտրանքը շարունակելիս:

Օրինակ` եթե ընտրանքը սկսված է N 2 հաշվային տեղամասից և այդ տեղամասի հաշվարարի հուշատետրի 2-րդ աղյուսակում ընտրանքից հետո մնացել են 6 բնակելի շինություններ, ապա հաջորդ հաշվային տեղամասում ընտրանքը սկսվում է 4-րդ բնակելի շինությունից: Մասնագիտացված տներում և ժամանակավոր կացատեղ հանդիսացող կազմակերպություններում, որտեղ կազմակերպվել են ինքնուրույն հաշվային տեղամասեր, բնակելի շինությունների ընտրանքը կատարվում է նույն կարգով:

Օրինակ` եթե մանկատան սենյակների ընտրանքը կատարվում է որևէ հիմնական հաշվային տեղամասի հաշվարարի հուշատետրի բնակելի շինություններից հետո, որտեղ վերջին ընտրված շինությունից հետո մնացել են 2 բնակելի շինություններ, ապա ընտրանքը մանկատանում սկսվում է 8-րդ սենյակից: Այսինքն` յուրաքանչյուր տասներորդ շինության ընտրանքը կատարվում է ամբողջ հրահանգչական տեղամասի սահմաններում:

ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՎ ՀԱՆՁՆՈՒՄ

27. Սահմանված ժամկետում, հրահանգիչ-հսկիչների կողմից վերահսկիչ շրջագայությունը (շրջայցն) ավարտելուց հետո, նրանցից պետք է ընդունել բոլոր փաստաթղթերը:

Դրա համար անհրաժեշտ է՝

1) հաշվել մարդահամարի լրացված հարցաթերթերի, հսկիչ թերթերի (Ձև թիվ 4), վերահսկիչ փաստաթղթերի (Ձև թիվ 6) և ուղեկցող թերթերի (Ձև թիվ 10) քանակը և համեմատել դրանք հաշվային տեղամասերի ամփոփ տեղեկագրերում (Ձև թիվ 6 քաղաքային, գյուղական) լրացված տվյալների հետ,

2) ստուգել հանրագումարների հաշվարկը՝ հաշվային տեղամասերի ամփոփ տեղեկագրերում (Ձև թիվ 6 քաղաքային, Ձև թիվ 6 գյուղական), այդ տվյալների հրահանգչական տեղամասի ամփոփ տեղեկագիր (Ձև թիվ 7) փոխադրումը և դրանցում ամփոփ հանրագումարների հաշվարկման ճշգրտությունը, ուղեկցող թերթերի (Ձև թիվ 10) լրացման ամբողջականությունն ու ճշգրտությունը,

3) համեմատել ամփոփ տեղեկագրերում գրառված բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները կազմալանի, տների (շինությունների) ցուցակներում, գյուղական համայնքներում բնակավայրերի և դրանց տարածքում գտնվող այլ բնակատեղերի ցուցակներում գրառված բնակչության թվաքանակի տվյալների հետ: Այդ տվյալների միջև տարբերություն հայտնաբերելու դեպքում անհրաժեշտ է պարզել պատճառը,

4) ստուգել ամփոփագրերում և ուղեկցող թերթերում յուրաքանչյուր բնակավայրի անվան գրառման ճշգրտությունը,

5) ընտրությամբ ստուգել մարդահամարի հարցաթերթերի և մարդահամարային այլ փաստաթղթերի լրացման ճշգրտությունն ու ամբողջականությունը,

6) ստուգել հաշվարարների պայուսակներում (թղթապանակներում) ուղեկցող թերթերի, մարդահամարի հարցաթերթերի հաջորդական դասավորվածությունը և համապատասխան օժանդակ նյութերի առկայությունը,

7) ստուգել յուրաքանչյուր հրահանգիչ-հսկիչի կողմից լրացված հաշվետվությունը (Ձև թիվ 14) և նրանցից հաշվով ընդունել մարդահամարային չօգտագործված և փչացված բոլոր փաստաթղթերը:

28. Հրահանգիչ-հսկիչներից նյութերի ընդունման ավարտից հետո մարդահամարի տեղամասի վարիչը կազմում է մարդահամարի տեղամասի ամփոփ տեղեկագիր (Ձև թիվ 8)՝ համապատասխան տվյալները դուրս

գրելով հրահանգչական տեղամասի ամփոփ տեղեկագրից և Ձև թիվ 8 –ի հավելվածից:

29. Մարդահամարի տեղամասի վարիչը և նրա օգնականը մարդահամարի անցկացման օրերին կազմում և ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային բաժնի պատասխանատու անձին, սահմանված հաշվետվական ձևով և ժամկետներին, ներկայացնում են շտապ հաղորդագրություններ՝ մարդահամարի անցկացման 10 օրերի, ինչպես նաև վերահսկիչ շրջագայության ընթացքի մասին:

30. Մարդահամարի տեղամասի վարիչը և նրա օգնականը ՀՀ ԱՎԾ տարածքային բաժնի պատասխանատու անձին են հանձնում՝

1) հրահանգիչ-հսկիչներից ընդունած բոլոր նյութերը, հաշվարարների հանձնած պայուսակները՝ լրացված հարցաթերթերով, հուշատետրերով, ամփոփ տեղեկագրով և տեղամասի հատակագծով,

2) հրահանգիչ-հսկիչների ամփոփ տեղեկագրերը, հուշատետրերը, հաշվետվությունները,

3) մարդահամարի տեղամասի վարիչի և նրա օգնականի հուշատետրը՝ մարդահամարի կազմակերպման և անցկացման վերաբերյալ իրենց դիտողություններով և առաջարկություններով,

4) մարդահամարի տեղամասի ամփոփ տեղեկագիրը (Ձև թիվ 8 և Ձև թիվ 8-ի հավելվածը),

5) բոլոր օժանդակ նյութերը՝ հատակագծեր, ցուցակներ, մարդահամարի չօգտագործված և փչացված հարցաթերթեր և մարդահամարային այլ փաստաթղթեր, լրացնելով աղյուսակ 2-ի 11-14-րդ սյունակները:

6) մարդահամարի տեղամասի վարիչը և նրա օգնականը ՀՀ ԱՎԾ մարզային գործակալության տարածքային պատասխանատու անձի հետ մասնակցում են հսկիչ թերթերի և վերահսկիչ փաստաթղթերի մարման աշխատանքներին՝ համաձայն դրանց մարման վերաբերյալ ցուցումների:

ԱՂՅՈՒՍԱԿ 1. ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏԵՂԱՄԱՍԻ

Հրահանգչական տեղամասի համարը	Ազգանուն, անուն, հայրանունը	Տարիքը	Կրթությունը
1.	2.	3.	4.

ԱՂՅՈՒՍԱԿ 2. ՀՐԱՀԱՆԳԻՉ-ՀՄԿԻՉՆԵՐԻՆ

Նյութերի ցանկը	Ստացված է վիճակագրության տարածքային բաժնից	Հանձնել է		
		1	2	3
<i>1.</i>	<i>2.</i>	<i>3.</i>	<i>4.</i>	<i>5.</i>
1. Մարդահամարի հարցաթերթ				
2. Հրահանգ «ՀՀ 2011թ. մարդահամարի հարցաթերթը լրացնելու (մարդահամարն անցկացնելու) կարգի»				
3. Հսկիչ թերթ (Ձև թիվ 4)				
4. Տեղեկանք ՀՀ 2011թ. մարդահամարն անցնելու մասին (Ձև թիվ 5)				
5. Վերահսկիչ փաստաթուղթ (Ձև թիվ 6)				
6. Գրություն այն անձանց, ում դժվար է տանը գտնել				
7. Հուշատետր հաշվարարի (Ձև թիվ 11 – քաղաքային, Ձև թիվ 11 – գյուղական)				
8. Ամփոփ տեղեկագիր հաշվային տեղամասի (Ձև թիվ 6 – քաղաքային, Ձև թիվ 6 – գյուղական)				
9. Հուշատետր հրահանգիչ-հսկիչի (Ձև թիվ 12 – քաղաքային, Ձև թիվ 12 – գյուղական)				
10. Ամփոփ տեղեկագիր հրահանգչական տեղամասի (Ձև թիվ 7 – քաղաքային/ գյուղական)				
11. «Բազմաբնակարան շենքի բնակարանների բնութագիր» Ձև թիվ 1 - բնակբնութագիր				
12. Ուղեկցող թերթ (Ձև թիվ 10)				
13. Գոյության միջոցների աղբյուրների ցանկ				
14. Մարդահամարի մասնակցի վկայական				
15. Գրենական պիտույքներ				
16. Պայուսակ				
17. Հրահանգչական և հաշվային տեղամասի հատակագծեր				

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ ՈՒ Թ Յ ՈՒ Ն ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ



Դուք մեկն եք այն աշխատակիցներից, ով իր մասնակցությամբ իր ներդրումն ունեցավ մեր երկրի զարգացման համար շատ կարևոր պետական միջոցառման անցկացմանը:

Հնարավոր չէ զարգացնել տնտեսությունը, իրականացնել քաղաքական, տնտեսական և սոցիալական բարեփոխումներ՝ չունենալով բնակչության թվաքանակի, սեռատարիքային կազմի, կառուցվածքի, տեղաբաշխման և այլնի մասին ճշգրտված վիճակագրական տվյալներ: Մարդահամարի արդյունքները կնպաստեն մեր երկրի առջև ծառայած բազմաթիվ կարևոր խնդիրների լուծմանը, որից առաջին հերթին կշահի հանրապետության բնակչությունը:

ՁԵՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նկարագրեք, խնդրեմ, մարդահամարի տեղամասում Ձեր աշխատանքի ընթացքում դրական և բացասական երևույթները:

Կա՞ն արդյոք առաջարկություններ հաշվային և հրահանգչական տեղամասերում մարդահամարի կազմակերպման և անցկացման վերաբերյալ:

Ընդգծեք այն հարցերը, որոնք դժվարություններ են առաջացրել մարդահամարի հարցաթերթի լրացման ժամանակ:

Առաջանու՞մ էին արդյոք դժվարություններ բնակչությունից մարդահամարի հարցաթերթի հարցերի պատասխանները ստանալու ժամանակ: